

Թիֆլիսի մեր բարեգործական ընկերութիւնները չգիտենք ինչու հարկաւոր չեն համարում մեր խմբագրութեան ուղարկել իրանց տարեկան գործունէութեան «Տեղեկագիրը»։ Այդ կողմից աւելի կորրեկտ է Բագուի Հայոց Մարդասիրական Ընկերութեան վարչութիւնը։

Այդ Տեղեկագրից իմանում ենք, որ Մարդասիրական «Ընկերութեան հասպոյն հիմնարկութիւնը, այն է գրադարան-ընթերցարանը, որը վայելում էր Բագու քաղաքի ամբողջ ազգաբնակութեան համակրութիւնը և ուշադրութիւնը, առանց կրօնի և ազգութեան խտրութեան, կնքուած լինելով իշխանութեան կարգադրութեամբ մարտի 10-ին 1903 թուի, փակուած մնում է մինչև այժմ։ Վարչութիւնը միշնորդել է պատշաճաւոր իշխանութեան առաջ, խնդրելով թոյլ տալ վերստին բանալ գրադարան-ընթերցարանը։ Սակայն չկամնենալով ծանրաբեռնել ընկերութեան գանձարանը գրադարանի կառավարութեան համար լինելիք ծախքերով, քանի որ նա դեռ փակուած է, վարչութիւնը որոշեց գըրադարանապետին և նրա օգնականին ազատ համարել իրանց պաշտօններից 1903 թուի օգոստոսի 1-ից։

Մարդասիրական ընկերութեան գատը ուսումնաբանական վարչութեան հետ ընկերութեանը պատկանեալ տան մասին, ինչպէս արդէն նախորդ ընհանուր ժողովին յայտնուած էր, յարուցուած է Բագուի նահանգական ատեանում նոր կարգով, այն՝ է սեփականութեան իրաւունքի հիման վրայ, Գործը վարում է ընկերութեան նախագահ երգուեալ հաւատարմատար Ս. Յարութիւնեան։

Ընկերութեան գործերը աւելի յաջողութեամբ առաջ տանելու համար վարչութիւնը նախորդ տարիների նման հէնց տարուայ սկզբից իր միջից ընտրեց մի քանի յանձնաժողովներ, բացի այդ աշխատանքի տան և ճաշարանի համար ընտրուած յանձնաժողովների մէջ վարչութիւնը որոշեց հրաւիրել և ընկերութեան անդամներից այնպիսի անձանց, որոնք կարող կը լինեն այդ հիմնարկութիւնների համար օգտակար լինել։

Ընտրուած յանձնաժողովներից իւրաքանչիւրը ամեն ամիս ներկայացնում էր վարչութեանը մանրամասն զեկուցում և հաշիւ ընկերութեան ամեն մի հիմնարկութեան մասին։ Միենոյն ժամանակ վարչութիւնը կազմեց առանձին հրահանգներ իւրաքանչիւր յանձնաժողովի գործառնութեան համար։ Այդ հրահանգները վարչութիւնը հարկ է համարում ներկայացնել ընդհանուր ժողովին ի հաստատութիւն։

Յանձնաժողովները կազմուած են հետևեալ կերպով.

1. Խնդրատուների մասին տեղեկութիւններ հաւաքող յանձնաժողով. Ն. Արէլեան. Յ. Սաղաթէլեան, բժ. Դ. Սարգսեան, Ն. Սունդուկեան:

2 Աշխատանքի Տան վերահսկող յանձնաժողով. Ֆր. Մարդանեան, Ն. Սունդուկեան, Ա. Խոջայեանց:

3. Ճաշարանի վերահսկող յանձնաժողով. Ա. Տէր-Գասպարեան և բժ. Գ. Սարգսեան:

4. Նոր շինութիւնների վերահսկող յանձնաժողով. Ա. Յառութիւնեան, Ա. Վաչեանց, Եր. Բուղադեան և Ֆր. Մարդանեան.

5. Գրադարանական յանձնաժողով. Ն. Արէլեան, Յ. Քոչարեան և Կ. Եազուբեան:

6. Էժանագին և ձրի բնակարանների վերահսկող յանձնաժողով, որը բաղկացած էր նոյն անդամներից, որոնք կազմում են առաջին յանձնաժողովը:

Մարդասիրական Ընկերութեան նոր շինութիւնը, որը սկսուեց 1902 թ. յունիսին, 1903 թ. յունիսին արդէն այնքան պատրաստ էր, որ վարչութիւնը հնարաւոր գտաւ դատարկել վարձած տունը, որտեղ մինչև այն տեղաւորում էին Ընկերութեան Աշխատանքի Տունը և Ճաշարանը, տեղափոխել այդ հիմնարկութիւնները Ընկերութեան նոր շինութիւնը, կանխաւ ստանալով դրա համար Բագուի պ. նահանգապետի թոյլաւութիւնը: Միաժամանակ վարչութիւնը աշխատում էր վերջնականապէս կարգի բերել այդ շինութիւնը և ուղղել այն բոլոր պակասութիւնները, որոնք նկատուած էին կապալառուի կատարած գործերի մէջ:

Ցիշեալ տները կառուցուած են քաղաքային հողի վրայ, որը տրուած էր Ընկերութեանը մշտապէս և անվարձ օգտուելու համար, և գտնուում է Ստանիսլաւկայա փողոցի վրայ: Գ. Թումայեանի անունով տունը ունի երկու յարկ և ներքնայարկ: Ներքնայարկում գետեղուած են՝ Աշխատանքի Տունը, պահեստը և անկերանոցը պատահական գիշերողների համար: Առաջին և երկրորդ յարկում տեղաւորում են Ընկերութեան ճաշարանը, գրասենեակը, կառավարչի բնակարանը, երկու խոհանոցներ և 31 սենեակ չքաւորների բնակութեան համար: Լ. Սերգէյեանի անունով տունը մի յարկանի է և բաղկացած է 17 սենեակներից, որոնցից 16 նշանակուած են բնակութեան համար, իսկ մէկը հիւանդներին ընդունելու համար—ներկայում լ. Սերգէյեանի անունով տան բոլոր սենեակներն արդէն բնուած են աղքատ ընտանիքներով, իսկ Գ. Թումայեանի անուան տան

մէջ բռնուած են 25 սենեակ, և մնում են դեռ ևս աղաւ 6 սենեակ:

Դ. Թումայեանի անուան տան շինութեան վրայ ծախք եղել է ընդամենը 34103 ր. 82 կ., իսկ և. Սերգէյեանի անուան տան վրայ ծախք եղել է 12268 ր. 63 կ.:

Տների անմիջական վերահսկողութիւնը յանձնուած է միևնույն կառավարչին, որը միաժամանակ վարում է և Աշխատանքի Տան կառավարչի պաշտօնը:

Հաշուետարուայ սկզբում Աշխատանքի Տան մէջ եղել է չորս բաժանմունք, որոնք են՝ 1) կազմարարական, 2) թղթէ տոպրակներ և կապոց կրելու կանթեր պատրաստելու, 3) ձըկնորսական ցանցերի հիւսումը և 4) պակլիա մաքրելու և քըրքը բռելու:

Փետրուարի 15-ից մացրուած է չունաեր կարելու բաժանմունք, իսկ կար ու ձեփի բաժանմունքը գործել է միայն ապրիլից մինչև օգոստոսի 1-ը:

Տարուայ ընթացքում կար ու ձեփի բաժանմունքում պատրաստուած է 1368 կտոր զանազան սպիտակեղէն և հագուստեղէն, որից 797 կտորը պատրաստուած է ընկերութեան ապրանքից, իսկ 571 կտորը պատուէր տուողների ապրանքից:

Կազմարարական մասում կազմուած են 8772 գրքեր՝ զանազան մեծութեամբ:

Չուստերի բաժանմունքում պատրաստուած են 1581 զոյգ չուստերի:

Թղթէ տոպրակներ և կապոց կրելու կանթեր պատրաստելու բաժանմունքում պատրաստուած են 50 հազար կանթեր, 358 փութ թղթէ տոպրակներ, որից 58 փութը պատրաստուած է ընկերութեան թղթից, իսկ 300 փութը պատուէր տուողների:

Զինորսական ցանցեր գործելու բաժանմունքում գործուած է 41 փութ 34¹/₂, փունտ ցանց, որից 15 փութը ընկերութեան պրեաժից (թելից), իսկ 26 փութ 34¹/₂, ֆ. պատուէր տուողների պրեաժից:

Պակլիա քրքրելու և մաքրելու բաժանմունքում ընդամենը պատրաստուած է 2 փութ պակլիա:

Այս բաժանմունքը, որտեղ աշխատում էին միմիայն ծեր կանայք և տղամարդիք, շուտով փակուեց աշխատող չունենալու պատճառով:

Աշխատանքի տան բանուորները նախորդ տարիների նման այս տարի էլ ստացել են ընկերութեան ճաշարանից ձրի ճաշ:

Հաշուետարուայ ընթացքում գլխաւորապէս լայնացրած է

կազմարարական և չուստեր կարելու բաժանմունքների գործունէութիւնը: Քաղաքի համարեա բոլոր աշխի ընկնող հիմնարկութիւնները իրանց գրեթերը ուղարկում են կազմելու համար ընկերութեանը, իսկ չուստերը Աշխատանքի տանը պատրաստում են այնքան նուրբ և մաքուր, որ պատուէրներ ստացւում են նոյնիսկ Անդրկասպեան երկրից:

Աշխատանքի տանը պատրաստած ապրանքները վաճառելու համար կիրակի օրերը գուրս էր բերւում «Սալդատսկի բազար», և նոյնպէս վաճառուել է Նիկոլայևսկի տօնավաճառում մայիս ամսում, որտեղ գաղաքը ձրիապէս տուել էր ընկերութեան մի խանութ»:

Աշխատանքի տունը Մարդասիրական ընկերութեան հոյակապ գործերից մէկն է. ցանկալի է, որ նա ընդարձակուի և աւելի մեծ զարգացում ստանայ: Եւ կարելի է վստահ լինել, որ ներկայ եռանդուն վարչութեան աջողութիւնը բերել նաև Որբանոց հիմնելու խնդիրը:

—Հայունեաց բարեգործական ընկերութիւնը.—Կիրակի, մարտի 14-ին, առաւտեան ժամը 12-ին կայացաւ Թիֆլիսի Հայունեաց Բարեգործական ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը, նախագահութեամբ տիկին Մարիամ Միքիմանեանցի:

Այս անգամ, հակառակ նախորդ տարիների սովորութեան, մեր յարգելի հայունիները շտապել էին կատարելու իրանց բաղաքացիական պարտաւորութիւնը, և արձագանդ տալով վարչութեան հրաւերին, մեծ թուով եկել էին ժողովի, թոյլ շտալով, որ ժողովը, անդամների պակասութեան պատճառով, յետաձգուի և կայանայ 7 օրից յետոյ, անդամների շատ սահմանափակ թուի մասնակցութեամբ, ինչպէս կատարուել է նախորդ տարիներում: Այս դէպքում, մեր միւս ընկերութիւնները, տղամարդկանց Բարեգործական ընկերութիւնը և Դրամատիկական ընկերութիւնը, արդարև, օրինակ պէտք է վերցնեն նախանձայոյզ հայունիներից:

Ընդհանուր ժողովի պարապմունքի առարկաներն էին—ընկերութեան 1903 թուի հաշիւը, ներկայ 1904 թուի նախահաշիւը, և ընկերութեան պաշտօնատար անձանց ընտրութիւնը:

Հաշիւների ընթերցումից և վերաստուգով յանձնաժողովի գեկուցումներից երևաց, որ ընկերութիւնը ունեցել է 1902 թուին—23,451 ր. 45. կ. գումար. օրից անձեռնմխելի գրամագլուխ՝ 10,000 ր., յատուկ գումար՝ 2000 ր., պահեստի գումար՝ 8500 ր., ծախքի գումար՝ 2951 ր. 45 կոպէկ: Անցեալ

1903 թուին նա ունեցել է 25,715 ր. 28., որից անձեռնմխելի գումար՝ 10,700 ր., յատուկ գումար՝ 3500 ր., պահեստի գումար՝ 8500 ր., ծախքի գումար՝ 3015 ր. 26 կ. և բացի դրանից կահկարասիք՝ 1050 ր.:

Անցեալ 1903 թուի ընթացքում ընկերութիւնը մուտք ունեցել է ընդամենը 8537 ր. 33 կ., որից անդամակցական վճարներ՝ 1404 ր., նոուշներ՝ 1600 ր. պարահանդէսից, բազարից, ներկայացումից՝ 3125 ր. 53 կ., գումարների $\frac{1}{5}$ -ից՝ 861 ր. 30 կ., կարուձեփ դպրոցից 1186 ր. 22 կ., ձեռագործներ ծախելուց՝ 319 ր. 18 կ., խոհանոցի իրերը ծախելուց՝ 41 ր. 10 կ., ծախք ունեցել է ընդամենը 6294 ր. 33 կոպէկ., որից կարուձեփ դպրոցի վրայ՝ 5564 ր. 97 կ., բարեգործութեան (նպաստներ չքաւորներին և թոշակաւորներ)՝ 485 ր. 84 կ. և զանազան մանր ծախսեր՝ 243 ր. 52 կ.:

Նախահաջուով ներկայ 1904 թուի ընթացքում սպասւում է մուտք՝ 6930 ր., ոոյն աղբիւրներից, ինչ որ 1903 թուին, և ծախք ոոյնչափ՝ 6930 ր.:

Թէ հաշիւը և թէ նախահաշիւը հաստատուեցին անփոփոխ, որից յետոյ տեղի ունեցան վարչութեան 7 անդամներից հերթով դուրս եկող 3 անդամի, 2 փոխանդամի և վերաստուգող յանձնաժողովի 3 անդամի ընտրութիւնները։ Գաղտնի քուէարկութեամբ ընտրուեցին վարչութեան անդամներ տ. տ. Մ. Մելիք-Ղարագեօցեան, Վ. Միլիան, Ա. Ռոտինեան, փոխանդամներ՝ տ. տ. Ե. Լիսիցեան և Ե. Առաքելեան. վերաստուգող յանձնաժողովի անդամներ՝ տ. տ. Ե. Աֆթանդիլեան, Ս. Բարխուդարեան և Ն. Դոլուխանեան։

Ընկերութիւնը ունի ներկայումս 189 անդամ։ «Մշակ»

—Բարեգործական ընկերութեան տեղեկագիրը.—Անցեալ 1903 թուի ընթացքում ընկերութիւնը ունեցել է 3 պատուաւոր, 21 մշտական—իսկական և 106 իսկական—տարեկան անդամներ։ Նրա ունեցած գոյքը եղել է. տոկոսաբեր թղթեր—55667 ր. 77 կ. և կանխիկ դրամ—295 ր. 97 կ., ընդամենը—55963 ր. 74 կ.: Հանգուցեալ Յ. Խուլադեանի կտակած դրամագլուխը և գոյքը եղել է. 1) անշարժ կալուածներ—81965 ր. 5 կ., 2) տոկոսաբեր թղթեր—90678 ր. 80 կ., 3) կանխիկ դրամ—181 ր. 62 կ., ընդամենը—172825 ր. 47 կ.։

Գալով տարեկան եկամուտին, ընկերութիւնը ամբողջ 1903 թուի ընթացքում եկամուտ ունեցել է միայն 4442 ր. 02 կ., այն է մասցըրդ նախորդ տարուանից—208 ր. 07 կ., 106 անդամակցական վճար—636 ր., պարահանդէսից—1418 ր. 55 կ., դրամագլխի տոկոսներ—2066 ր. 52 կ., նուէր—10 ր. և

պարտք—102 ր. 88 կոպէկ։ Մախք եղել է նոյնչափ. այն է՝ 4442 ր. 02 կ., որից դիւանական ծախքեր, բնակարանի վարձ—1132 ր. 98 կ., աղքատներին և կարօտեալներին նպաստ կամ բռն բարեգործական նպատակի—2828 ր. 24 կ., աւելացումն դրամագիշի վրայ—413 ր. 10 կ. և ապահովագրութիւն—67 ր. 70 կոպէկ։

Միակ միխթարական և պայծառ երեսյթը ընկերութեան գործունէութեան մէջ Խուզադեանի կտակի իրագործումն է։ Վերջապէս, երկար ձգձգումներից յետոյ, վարչութիւնը 1903 թ. սեպտ. 20-ին բացել է «որբանոց» յանուն Յ. Խուզադեանի, որի մէջ այժմ պատսպարուած են 20 որբեր։ Այդ որբերի պահպանութեան համար և առհասարակ որբանոցի վրայ ծախսուել է 4 ամսուայ ընթացքում (1 սեպտ.—31 դեկտ. 1903) 5531 ր. 90 կ., որից բնակարանի վարձ—894 ր. 40 կ. (ց1-ն մայիսի 1904), որբանոցի վերանորոգութեան վրայ—1987 ր. 28 կ., կահ-կարասիք—1031 ր. 99 կ. և մնացածը—որբերի պահպանութեան, ուտելիք, հազուստ, կառավարչունու ոռնիկ։ «Մշ.»

Դիրամատիկական Ընկերութեան արտակարգ ընդհանուր ժողովը.—Մարտի 23-ին, երեկոյեան ժամը 8-ին, Արտիստիկական Ընկերութեան դահլիճում կայացաւ Հայոց Դրամատիկական ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը, նախագահութեամբ Հ. Առաքելեանի, քարտուղարութեամբ Գ. Վանցեանի և մասնակցութեամբ մատ 50 անդամների։

Վարչութեան ներկայացրած գեկուցումից երեաց, որ ընկերութիւնը զեֆիցիտ ունի այժմ 8000 ըուբլի, որ նա ծածկել է անձեռնմխելի գումարներից և մի քանի այլ աղբիւրներից, որը և պէտք է լրացնել։ Յայտնուեց նոյնպէս, որ առաջիկայ սեղնում հայոց թատրոն ունենալու հարցը վարչութիւնը ենթարկում է ընդհանուր ժողովի քննութեան և որոշման։

Վիճարանութիւնները, որոնք երբեմն աղմկալից և յուզիչ կերպարանք էին ստանում, դառնում էին գլխաւորապէս այդ երկու ինդիբների շուրջը. առաջարկուեցին զանազան միջոցներ՝ գեֆիցիտը ծածկելու և ապագայում նրանց առաջն առնելու համար։ Այդ միջոցների թւում կային և առաջարկութիւններ՝ մի երկու տարի ներկայացումներ չտալ, այլ հաւաքել դրամագլուխ։ Ներկայացումները տալ ոչ թէ Արտիստիկական ընկերութեան թատրոնում, ուր աւելի թանգ է նստում, այլ Ազնուականութեան թատրոնում, ուր, համեմատաբար, աւելի էժան է նստում։ Եղաւ և հետեւեալ առաջարկութիւնը. դրամատիկական ընկերութեան ամեն մի անդամին, որ վճարում է 5 ր.

անդամակցական տուրք, որոշ զիջումն անել թատրոնական տոմսակների վերաբերմամբ:

Ընդհանուր ժողովը, բննելով այդ բոլոր առաջարկները, լսելով վարչութեան բացատրութիւնները, լսելով ժողովականների մի քանիսի խիստ յարձակումները վարչութեան գործած սխալների, ցոյց տուած անտարբերութեան և անգործունէութեան մասին, կայացրեց հետևեալ որոշումները. 1) առաջարկել վարչութեան շարունակել հայոց ներկայացումները առաջիկայ սեղոնին և տալ այդ ներկայացումները միայն Արտիստիկական ընկերութեան թատրոնում. 2) առաջարկել վարչութեան շարունակել իր ակամած ժողովարարութիւնը՝ դեֆիցիտը ծածկելու մասին, մանաւանդ, որ արդէն ժողովուած է 1300 ր. և մի յայտնի անձն և խոստացել է տալ 2—3000 ըուբլի այս նպատակով. 3) ընտրել վարչութեան աջակից անդամներ նոյն նպատակով. Միւս առաջարկութիւնները մերժուեցին:

Իբրև աջակից անդամներ՝ ընտրուեցին բաց քուէարկութեամբ՝ տ. տ. Մարտիրոսեան, Բարխուդարեան, Մամուլեան և պ. պ. Ա. Մէլիք-Ազարեան, Ե. Շատուրեան, Գ. Շուրինեան:

Ապա ժողովը գաղտնի քուէարկութեամբ ընտրեց տիկին Մակարեանի մրցանակի բաշխման յանձնաժողովի անդամներ—պ. պ. Յ. Սպենդիարեանին, Թափանակեանին, Խաժակնեանին, Ս. Լիսիցեանին և Ե. Թոփչեանին, իսկ փոխանդամներ՝ պ. պ. Պետրոսեանին և Վանցեանին:

«Մշակ»

Նիստը փակուեց ժամը 1-ին:

—«Կավ.»-ի պաշտօնական մասում հրատարակուած է հետևեալ վճիռը. «1904 թուի ապրիլի 13-ին, ես, Թիֆլիսի նահանգապետու, համաձայն Թիֆլիս քաղաքին վերաբերուող պարտադիր վճիռի, որ հրատարակել է Կողկասի պ. կառավարչապետը 1902 թուին, հիմնուելով պետական կարգի և հանրային հանգըստութեան պահպանութեան միջոցների 15-րդ յօդուածի վրայ վճռեցի. ներկայ ապրիլի 11-ին Թիֆլիսի կայարանում ժողովուելու պատճառով հասարակական կարգին հակառակ գործողութիւնների և ոստիկանութեան օրինական պահանջները չկատարելու համար բանտարկութեան ենթարկել. ա) Երկու ամսով—1) տպարանական բանուոր Իվան Բալկվածէին, 2) գործարանի ծառայող Դաւիթ Զիարելրովին 3) գործարանի բանուոր Միխայիլ Կիկնաձէին, 4) գարբին Սոլոմոն Կորիձէին, 5) անտառապահ Միխայիլ Լատկինին, 6) տեխնոլոգ-ուսանող Մելիքոն Բուսելին, 7) մողիստկա Մարիա Մխոլաձէին. ա)

Ապրիլ, 1904.

վեց շաբթով. 8) գրաշար Մելիտոն Նողիային, 9) կազմարար Վարսենտիա Կոլաձէին, 10) գրաշար Էրաստ Տարատաձէին, 11) տպարանի բանուոր Միխայիլ Բերդվաճէին, 12) առանց որոշ զբաղմունքի Ալեքսանդր Վուլ'ֆովիչին, 13) իմրագրութեան ծառայող Դմիտրի Զաշիին, 14) գրաշար Գէորգի Շարաձէին. գ) երեք շաբթով. 15) փականագործ Ալեքսանդր Զիարերովին, 16) գրաշար Սերգէ Կորիձէին, 17) տպարանի բանուոր Գրիգորի Զաշիին. դ) մի շաբթով. 18) գործարանի բանուոր Դաւիթ Կարտաշվիլիին, 19) առանց որոշ զբաղմունքի Դմիտրի Խվետագուրիձէին. Այս որոշման գործադրութեան սկիզբը հաշուել 1904 թուի ապրիլի 11-ի երեկոյեան ժամը 9-ը».

—Ալեքսանդրօպոլում մարտի 20—22-ին երևանի նահանգական դատարանի ժամանակաւոր բաժինը քննեց Ալեքսանդրովի բնակիչ Հայկ Ամատունու, Սիմէն Յարութիւնեանցի և Մեծ-Դուսթեանդ գիւղի քահանայ Տէր-Յովհաննիսեանցի գործը, որոնք մեղադրում էին պատժական օրէնսդրքի 264-րդ յօդուածի հիման վրայ: Դատարանի կազմը հետևեալն էր. նախագահ՝ Ֆ. Կ. Բակալօ, անդամներ՝ Ա. Ֆ. Մատուսելիչ և Ն. Գ. Եակուբենկօ. մեղադրում էր Երևանի նահանգական դատարանի պրոկուրոր Ն. Ա. Գլագոլովը, իսկ պաշտպանում էին երդուեալ հաւատարմատարներ Ն. Կ. Մուրաւիկը (Մոսկուայից), Լ. Ա. Խոմենտովսկի, Տ. Ն. Յովհաննիսեանց և երդուեալ հաւատարմատարի օգնական Գ. Ի. Խատիսեան (Թիֆլիսից); Գործը ըննուում էր դռնփակ: Դռնբաց յայտարարուած վճռով մեղադրեալները յանցաւոր ճանաչուեցին պատժական օրէնըսդրքի 266-րդ յօդուածի հիման վրայ և դատապարտուեցին բանտարկութեան—Տէր-Յովհաննիսեանց քահանան և Հայկ Ամատունին 8-ական ամսով, իսկ Սիմէն Յարութիւնեանը 6 ամսով:

—Մինիստրների խորհրդի մարտի 4-ի Բարձրագոյն հաստատուած վճիռով Դետրիս աւանը, որ Զանգեզուրի գաւառի վարչական կենտրոնն է, վերափոխուած է գաւառական քաղաքի նոյն անունով—այն պայմանով, որ քաղաքի գծի մէջ եղած բոլոր հողերը մնան այն անձերի և հաստատութիւնների ձեռքին, ուր գտնուում էին առաջ օրինական կարգով, և որ Դեորիսում եղած բոլոր գիւղական դասակարգին պատկանող անձերը, եթէ չուզեն գրուել քաղաքացի, օգոստին իրանց բոլոր նախկին իրաւունքներով: Դրա հետ միասին ներքին գործերի մինիստրին թոյլատրուած է կարգադրել ներմուծել այդ նոր քաղաքը կրծատուած քաղաքային ինքնավարութիւն, համաձայն այդ առիթով գոյութիւն ունեցող կանոնադրութեան 22-րդ յօդուածի, և քաղաքի կալուածների գնահատութիւն ա-

նել, որպէսզի որոշուի կալուածատէրերի մասնակցութեան երաւունքն առաջին ժողովին, Գնահատութիւնը լինելու է քաղաքի սեփականատէրերից ընտրուած առանձին յանձնաժողովի ձեռքով, որի նախագահը լինելու է Գանձակի նահանգապետի կողմից նշանակուած անձը:

—Պաշտօնապէս հրատարակուած է, որ ներկայ տարուայ ապրիլի 2-ից հաստատում է փողի փոխադրութիւն պոստով Աւստրիա, Անգլիա, Գերմանիա, Ֆրանսիա, Շվեյցարիա և այնական էլ Ռուսաստան: Այդ փոխադրութիւնը կը լինի պետութեան ներսում կատարուող փոխադրութեան ձևով՝ միայն հետեւալ լրացումներով. 1) հեռագրով փող փոխադրել չէ թոյլատըրուամ, 2) փոխադրութեան գումարը պէտք է նշանակուի բանեկի վրայ այն երկրի փողով, ուր ուղարկուած է, 3) բանեկի վրայ ոչինչ չէ կարելի գրել փող ստացողի անունով, որովհետև այդ բանեկը չէ ուղարկուել արտասահման. ուղարկան պոստը ճառորդելու է յիշուածէ երկիրների պոստերին, թէ հւմնից, որպան, մւս համար և ուր պէտք է վճարել. 4) միանուագ փոխադրել կարելի է Աւստրիա՝ 254 կրոն, Գերմանիա՝ 216 մարկ, Ֆրանսիա և Շվեյցարիա՝ 266 ֆրանկ:

—Ժողովրդի լուսաւորութեան մինիստրութեան նոր կառավարիչ է նշանակուած գեներալ-լեյտենանտ Վաշիմիր Գավրիլովիչ Գլազով, որ ծնուել է 1848 թուականին, դինուուցական կրթութիւն է ստացել, զինուորական զանազան պաշտօններ է վարել և 1901 թուականից վարում էր Ռուսաստանի զինուորական բարձր դպրոցի՝ Նիկոլայեան ճեմարանի գլխաւորի պաշտօնու:

—Մամուլի վերաբերեալ կարգադրութիւններ.—Մամուլի գործերի գլխաւոր վարչութեան կարգադրութեամբ Ֆինլանդիայում արուած է առաջին նախազգուշացում Նէյշլու քաղաքում լոյս տեսնող կեսկիսավօ լրագրին, որ տպել է անստոյդ և ոչ մի հիմք չունեցող լուր ֆիննական եղերքներում ապագայում տեղի ունենալիք պատերազմի մասին *):

Պետրովուրգում թոյլատըրուած է Ա. Ա. Տիխոնովին, որ յայսնի է գրականութեան մէջ լուգովոյ կեղծ անուան տակ, եր խմբագրութեամբ հրատարակել նախապէս՝ գրաքննուող երկշաբաթեայ Մայք անունով մի թերթ:

—Ներքին գործերի մինիստրը որոշեց չորս ամսով դաշտեցնել «Օրловскій Вѣстникъ» լրագրի հրատարակութիւնը:

*) Русс. Вѣд., № 94.